ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 20-Ա

«29» հունիսի - 2016թ. թիվ 5 արտահերթ նիստ

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 29-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հունիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{00}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2016 թվականի
հունիսի 29-ի թիվ 5 արտահերթ
նիստի N 20-Ա որոշման

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1/ Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի ավագանու 2016 թվականի հունիսի 29-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին.

2/ Դրամական օգնություն հատկացնելու մասին.

3/ Դրամական աջակցություն տրամադրելու մասին.

4/ Գումար հատկացնելու մասին.

3/ Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը իրականացնելու և համայնքի հողերի հաշվեկշիռը կազմելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 21 -Ա

«29» հունիսի - 2016թ. թիվ 5 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը և համայնքի բնակիչների դիմումները.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի սոցիալապես անապահով մի քանի բնակիչների հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՐԶ ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ * 04702545 *

2016 թվականի հունիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 11 $^{30}$

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լուսագյուղ
համայնքի ավագանու 2016 թվականի
հունիսի 29-ի թիվ 5 արտահերթ
նիստի N 21-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1/ Էդվարդ Դիլանյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

2/ Ֆահրադ Բրոյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

3/ Ջասմ Բրոյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

4/ Գևորգ Ղուլյանին - 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

5/ Նարեկ Սիմոնյանին - 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ու Մ 22-Ա

«29» հունիսի - 2016թ. թիվ 5 արտահերթ նիստ

## ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի բնակիչ, Ապրիլյան պատերազմին մասնակցած ժամկետային զինծառայող Խաչատուր Թորոսյանի հորը՝ Արամ Թորոսյանին հատկացնել դրամական աջակցություն՝ 50 000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հունիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 $^{00}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23-Ա

«29» հունիսի - 2016թ. թիվ 5 արտահերթ նիստ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և համայնքապետի առաջարկությունը.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից 32 000 /երեսուն երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել կրակմարիչները լիցքավորելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Գրասենյակային նյութեր և հագուստ» 4261 հոդվածից 40 880 /քառասուն հազար ութ հարյուր ութսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր ձեռք բերելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածից 28 000 /քսանութ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել դրոշներ ձեռք բերելու նպատակով:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Տեղական ինքնակառավարում» 0111 ծրագրի «Մեքենաների և սարքավորումների և ընթացիկ նորոգում» 4252 հոդվածից 92 000 /իննսուն երկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել պատճենահանող սարքերի նորոգման և պահպանման նպատակով:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի 2016 թվականի բյուջեով հաստատված «Սոցիալական հատուկ արտոնություններ» 1071 ծրագրի «Այլ նպաստներ բյուջեի» 4729 հոդվածից 130 000 /մեկ հարյուր երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար հատկացնել համայնքի ուսումնական տարվա շրջանավարտներին, որպես նվիրատվություն՝ ծնող Շուշանիկ Մարտիրոսյանի անունով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հունիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 12 $^{30}$

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24-Ա

«29» հունիսի - 2016թ. թիվ 5 արտահերթ նիստ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման և հիմք ընդունելով համայնքապետի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լուսագյուղ համայնքի հողերի ընթացիկ հաշվառմանը՝ հողային հաշվեկշռին: Այն համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման հետ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

| | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ա Գրիգորյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Գ. Սարգսյան | -------------------- | -------------------- | ---------------- |
| Խ.Տերտերյան | -------------------- | -------------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ -------------------- Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2016 թվականի հունիսի «29»
գ. Լուսագյուղ
Ժամը՝ 13 ⁰⁰